

1193



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Երջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«05» 02 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 024 - 25

Նախաձեռնող՝

«ԱՐՏՄԱ» ՍՊԸ

Գեղարքունիքի մարզ, Սայաթ նովայի փողոց, 12 շ.

Գործունեությունը՝

Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի Ավազի
հանքի փող., թիվ 7,8,9,10 հողամասերի
հասցեներում նախատեսվող 4000կՎտ
դրվածքային հզորության արևային
ֆոտոէլեկտրական կայանի կառուցման և
շահագործման աշխատանքներ

Գեղարքունիքի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՂԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 024 - 25

«05» փետրվարի 2025թ.

Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի Ավազի հանքի փողոց, թիվ 7,8,9,10 հողամասերի հասցեներում նախատեսվող 4000 կՎտ դրվածքային հզորության արևային ֆոտոէլեկտրական կայանի կառուցման և շահագործման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝

«ԱՐՏՄԱ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն,
նախագծային փաստաթղթեր
/Բ կատեգորիա/

Գտնվելու վայրը՝

Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք,
Լճաշեն բնակավայր

Ներածական մաս. «ԱՐՏՄԱ» ՍՊԸ-ն նախատեսում է կառուցել և շահագործել արևային կայան Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի վարչական տարածքում: Գործունեության իականացման տարածքը գտնվում է Սևանա լճից 3900մ, իսկ Լճաշեն գյուղից՝ 1650 մ հեռավորությունների վրա:

Հողատարածքի նպատակային նշանակությունն էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների է, գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի: Նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-150-Ն) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի գ. ենթակետի, այն է՝ հողմաէլեկտրակայաններ՝ 5 ՄՎտ և ավելի ընդհանուր հզորությամբ, արևային էլեկտրակայաններ՝ 3 հա և ավելի տարածք զբաղեցնող կամ լողացող արևային կայանքներ:

Նկարագրական մաս. Նախատեսվող 4000 կՎտ դրվածքային հզորության արևային ֆոտոէլեկտրական կայանի կառուցման նպատակը էլեկտրաէներգիայի արտադրությունն ու արտադրված էներգիայի վաճառքն է:



Արևային ֆոտովոլտային կայանը նախատեսվում է կառուցել 6.6 հա տարածքում, որտեղ արևային ֆոտովոլտային կայանի զբաղեցրած տարածքը կկազմի 1,87 հա, իսկ կանաչապատման գոտին՝ 4,73 հա:

Արևային կայանի արևային վահանակների մոնտաժման համար նախատեսվում է տեղադրել 270 հատ 28 վահանակով և 20 հատ՝ 42 վահանակով մետաղական կարկասի խմբեր:

Նախատեսվել է բետոնե հիմքերի տեղադրմամբ իրականացնել արևային կայանի մետաղական կարկասի մոնտաժումը: Մետաղական կարկասը մոնտաժվելու է նոր տեղադրվող բետոնե սյունային տիպի հիմքերի վրա: Յուրաքանչյուր խմբում առկա են 10 հատ և 14 հատ բետոնե սյունային հիմքեր:

Բետոնե հիմքերի համար նախատեսվում է հորատել 0.9 մ խորության 300 մմ տրամագծով փոսորակներ՝ ընդհանուր 3470 հատ, որտեղ լցվելու է 100 մմ բարձրությամբ խճային շերտը, ապա մետաղական սյան(C1) տեղադրումից հետո լցվելու է B15 դասի բետոն:

Իրականացվելու են հաստատուն և փոփոխական հոսանքի մալուխների մոնտաժման աշխատանքներ, տեղադրվելու են փոխակերպիչ սարքեր: Նախագծի իրականացման համար ընտրվել են 350 կՎԱ հզորությամբ Sungrow 350HX մակնիշի 13 ինվերտորներ: Արևային վահանակների միջև կապն իրականացվելու է 1x6 մմ² կտրվածքի հաստատուն հոսանքի պղնձյա մալուխներով: Ուժային մալուխների մոնտաժային ուղեգծերը դեպի ուժային 35/0.8-0.8կՎ տրանսֆորմատորային ենթակայան իրականացվելու է ստորգետնյա տարբերակով՝ 0.7 մ խորությամբ: Խրամուղում ավազի 100 մմ շերտի վրա փռվելու է մալուխը, ապա նորից ծածկվելու է 150 մմ ավազի շերտով:

Նախատեսվում է 4448 կՎԱ հզորությամբ և 35 կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայան, ինչը բաղկացած կլինի 35 Վ լարման մասից, տրանսֆորմատորային մասից և 0.8կՎ լարման անջատիչներից: Տրանսֆորմատորային ենթակայանի չափերը կլինեն՝ 6058x2896x2438 մմ: Այն կտեղադրվի հատուկ նախագծված բետոնե հարթակի վրա:


Տրանսֆորմատորային ենթակայանի համար նախատեսվում է կառուցել յուղահավաք: Յուղահավաքի համար նախատեսվում է քանդել 10,2 խմ ծավալով բնահող, ինչը տեղում հարթեցվելու և հետլիցք է արվելու:

Յուղահավաքը կառուցված կլինի երկաթբետոնե նյութից՝ 1^o թեքության անկյան տակ: Յուղի կուտակիչի հորի չափսերը կլինեն 2970x2500x1200 մմ: Յուղի պահեստավորման բաքը կառուցված կլինի բետոնե պատերից՝ ներսում մետաղական ցանցով: Ենթակայանի 35 կՎ մալուխային գիծը միացվելու է 35 կՎ լարման փակ անջատիչ պահարանին: Այս մալուխը տեղադրվելու է 1,2 մ խորությամբ մալուխային խրամուղու մեջ: Հողանցումը պատրաստված կլինի 40X4 հարթ պողպատից:

Արևային կայանի հողանցումն իրականացվելու է իրարից անկախ՝ 7 նոր կառուցվող հողանցման կոնտուրներով: Հողանցման կոնտուրները բաղկացած կլինեն 10 հատ L=2000 մ 50x50x5 մ ուղղահայաց տեղադրվող անկյունակներով:

Մետաղական ցանկապատն իրականացվելու է 2.5 մ քայլով 49x2մմ, 3 մ չափով մետաղական խողովակների տեղադրումով: Ցանկապատի ընդհանուր երկարությունը կազմվելու է 1629 մ: Ցանկապատի բարձրությունը կլինի 2 մ:

Տարածքի լուսավորությունն իրականացվելու է 50 Վտ լեդ լուսատուներով, նախատեսվում է նաև տեղադրել անվտանգության տեսանկարահանող սարքեր:



Նոր կառուցվող 4000 կՎտ դրվածքային հզորությամբ արևային կայանի 35/0.8-0.8 կՎ ենթակայանի էլեկտրամատակարարումը նախատեսված է 35 կՎ ՕԳ-ից՝ երկու ճյուղավորմամբ: Ճյուղավորումներն իրականացվելու են ՕԳ-ի N 8 և N 10 հենարաններից՝ մալուխագծերով, այնուհետև կառուցվելու է երկշղթա օդային գիծ՝ մինչև ենթակայանի մոտակայքը, որտեղ ՕԳ-ից նորից անցում է կատարվելու մալուխագծերի: Մինչև ԵԿ կառուցվելու է ստորգետնյա մալուխագիծ: Երկշղթա ՕԳ-ի ուղեգիծն անցնելու է Գեղարքունիքի մարզի Լճաշեն բնակավայրի համայնքային հողերով՝ հիմնականում արոտավայրերով: Ենթակայանի մուտքի պաշտպանության համար, նախատեսված է շանթապաշտպան ճոպանի մոնտաժում: Օդային գծի կառուցման համար նախատեսված են տիպարային, մետաղական, երկշղթա խարսխաանկյունային և միջանկյալ հենարաններ, ընդհանուր՝ 37 հենարան: Նախատեսված են 110կՎ-ի հենարաններ (միջանկյալ Ո110-2 տիպի): 35ԿՎ Օդային գիծը կունենա 4473մ երկարություն:

Հաստատուն հոսանքի մալուխների խրամուղիների ընդհանուր երկարությունը կազմելու է 370 մ: Փոփոխական հոսանքի 0.8 կՎ մալուխների խրամուղիների ընդհանուր երկարությունը կլինի 690 մ:

Շինարարության և շահագործման փուլերում խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում, շտերով՝ ըստ պահանջի: Ջրցանի և հողային գրունտի խոնավացման համար օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով Սևան համայնքից, կամ օգտագործվելու է պարզարանի ջուրը:

Շինարարության համար անհրաժեշտ բետոնանյութը բերվելու է պատրաստի պայմանագրային հիմունքներով՝ մոտակա Սևան համայնքից:

Գործունեության իրականացման ընթացքում նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում:

Շինարարական աշխատանքների համար նախատեսված մեքենաներն ու տեխնիկական կայանվելու են հարակից ճանապարհի եզրին, աշխատելու են հաջորդաբար՝ ըստ անհրաժեշտության: Տարածքում շինանյութերի պահեստավորում չի նախատեսվում:

Գործունեության ենթակա տարածքում բացակայում են ջրամատակարարման և ջրահեռացման, էներգամատակարարման, գազամատակարարման համակարգերը:

Շինարարության փուլում աշխատողների համար նախատեսվում է 1,5x1,5 չափերով 3 մ խորությամբ սեպտիկ հոր: Հորի մաքրումը կկատարվի մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Գործունեության իրականացման տարածքն անտառածածկ չէ, բացակայում է ծառաթփային բուսականությունը, առկա է խոտածածկ: ՕԳ-ի հենասյունների տեղակայման վայրերում ևս բացակայում են ծառերը, թփերը, ուստի ծառերի հատման անհրաժեշտություն չկա:

Նախատեսվում է, որ կառաջանա կենցաղային աղբ՝ տարեկան 2640 կգ զանգվածով: Առաջացած շինաղբն ու կենցաղային աղբը պայմանագրային հիմունքներով նախատեսվում է տեղափոխել համայնքապետարանի կողմից հատկացված վայր: Շինարարության ժամանակ առաջացած աղտոտված լաթերը, պարկերը հանձնվելու են թափոնների օբյեկտի վնասագերծում կատարող կազմակերպություններին կամ խառնվելու են կենցաղային աղբի հետ 1/10 հարաբերակցությամբ և տեղափոխվելու են աղբավայր:



Գործունեության ենթակա և հարակից տարածքներում չկան բնության, պատմության հուշարձաններ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն),
- արևակայանի, ենթակայանի, շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում կատարվելու է գրունտի խոնավացում, անհրաժեշտության դեպքում՝ ճանապարհների ջրցան, որը կատարվելու է ջրցան մեքենայով՝ չոր և շոգ եղանակներին,
- շինանյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով, իսկ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով,
- շահագործվելու են միայն տեխնիկական սպասարկում անցած և սարքին վիճակում գտնվող մեքենաներ,
- տարածքում նյութերը պահվելու են ծածկված վիճակում՝ անջրթափանց թաղանթով, կամ ժամանակավոր ծածկի տակ,
- արևակայանի և ենթակայանի կառուցման փուլում հանվող հողային զանգվածը կուտակվելու է տարածքում և ծածկվելու է անջրթափանց թաղանթով,
- հողային զանգվածն օգտագործվելու է անմիջապես տեղում՝ հետլցման և տարածքի բարեկարգման նպատակով,
- ճանապարհի ջրցանը և գրունտի խոնավացումը կկատարվի այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքաջրեր,
- շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների վրա, իսկ շինարարական տեխնիկան ժամանակավոր կայանվելու է գրունտային ճանապարհի վրա,
- շինարարական տեխնիկայի, լիցքավորումը և սարքավորումների վերանորոգումը կատարվելու է գործունեության տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կետերում,
- շինարարության ընթացքում առաջացած կենցաղային և արտադրական հոսքաջրի հեռացման համար կտեղադրվի սեպտիկ հոր, ինչի մաքրումը կկատարվի մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- աշխատանքներն իրականացվելու են միայն ցերեկային ժամերին,
- օդային գծի հենարանների լայնակների, ճոպանականգնակների վրա տեղակայվելու են հակաթռչնային արգելափակոցներ՝ թռչունների նստելը կամ բնադրումը բացառելու նպատակով,
- օդային գծերի հենասյունների տեղադրման՝ 2 մ շառավղից դուրս տարածքներում և հարակից տարածքներում կատարվելու է կանաչ ցանքս՝ խոտի տեսքով՝ խախտված կանաչապատ տարածքի վերականգնման նպատակով,
- հնարավոր վթարների դեպքում յուղը նյութը հավաքված յուղը, յուղոտված լաթերը և յուղային նյութեր պարունակող այլ մասերը հեռացվելու և հանձնվելու են համապատասխան վերամշակող կազմակերպություններին,



-սև և գունավոր մետաղի ջարդոնը հանձնվելու է մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,

-արևակայանի շահագործման ընթացքում առաջանալու են նաև վնասված պանելներ և այլ խոտանված մասեր, որոնք կուտակվելու են տարածքում՝ 6x3 մ չափերով փակ պահեստային շենքում՝ մետաղական վագոն-տնակում՝ մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը: Արևային կայանի պանելներն ունեն 10 տարվա օգտագործման երաշխիք, համաձայն ինչի՝ շարքից դուրս եկած կամ վնասված պանելները հետ են վերադարձվելու արտադրող կազմակերպությանը՝ նորով փոխարինելու նպատակով: Մնացած ժամանակաշրջանում շարքից դուրս եկած պանելները կկուտակվեն պահեստարանում՝ մինչև դրանց արտահանման կամ Հայաստանի Հանրապետությունում դրանց վերամշակման հնարավորությունների ստեղծումը:

Ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված՝ մթնոլորտային օդի, հողային ռեսուրսների, հողի բերի շերտի պահպանման, շինարարական նյութերի և թափոնների տեղափոխման, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության վերահսկման, աղմուկի մակարդակի, կենսաբազմազանության ապրելավայրերի և աճելավայրերի մշտադիտարկումներ:

Բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների իրականացման համար նախատեսվում է տրամադրել տարեկան 250000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, Սևան համայնքի Լճաշեն գյուղի Ավագի հանքի փողոց, թիվ 7,8,9,10 հողամասերի հասցեներում նախատեսվող 4000 կՎտ դրվածքային հզորության արևային ֆոտոէլեկտրական կայանի (ԱՖԷԿ) կառուցման և շահագործման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Գեղարքունիքի մարզպետարանն ու Սևանի համայնքապետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում և կկրեն ժամանակավոր բնույթ:

Փորձաքննական պահանջներ

- Աշխատանքները կատարել՝ պահպանելով աշխատանքի և աշխատողների անվտանգության ապահովման համար սահմանված կանոնները և նորմերը:
- Աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել գնահատման հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:



- Կատարել աղետներին հակազդելու համակարգերի պարբերաբար զննումներ, հնարավոր ռիսկերը կանխարգելելու նպատակով:
- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ԱՐՏՄԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սևան համայնքի Լճաշեն բնակավայրի Ավագի հանքի փողոց, թիվ 7,8,9,10 հողամասերի հասցեներում նախատեսվող 4000 կՎտ դրվածքային հզորության արևային ֆոտոէլեկտրական կայանի կառուցման և շահագործման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Արշակ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

Գոհար Մինասյան